




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Ս. ՇԱՀՈՒՄՅԱՆ



ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ՄԱԲՍԱՆԵՆԳՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

13.07.2013

2011-07

891.990

0-26 3

ԱՐ

Պ Ա Տ Ա Ն Ե Կ Ա Կ Ա Ն Ս Ե Ր Ի Ա

Ս. ՇԱՀՈՒՄՅԱՆ

Բ Ա Յ Լ Շ Ե Վ Ի Կ Յ Ա Ն
ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԻՆ ՅԵՎ ՄԵԾ ՀԱՍՏԱԿԻ ՅԵՐԵՆԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Թարգմանեց՝ Մ. ԽԱՆՁԱԴՅԱՆ

2046 1007 32734

Պ Ե Տ Շ Ե Վ Ս 1 9 3 1 Յ Ե Ր Ե Վ Ա Ն
ՀԱՅԿ-ՇՏՐԱ
ՈՒՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊՐԵՍՍԱԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲԵՆՁԻՆԸ ՃԱՆԱՊԱՐԶ Ե ԳՅՎՈՒՄ

1919 թվին բենզինի ամեն մի կաթիլը մեծ արժեք ունեւր Կարմիր Բանակի համար: Անդրկովկասի ընդհատակյա կուսակցական կազմակերպութիւնները փորոշել էյին գոնե մի քիչ բենզին հասցնել Խորհրդային Ռուսաստան: Այս գործը կարելի չեր իրականացնել միայն առաջաստանովերով: Ցամաքում խանգարում եր սպիտակ և կիսասպիտակ հանրապետութիւնների փակոցը: Ծովով գնալն ել վտանգավոր եր՝ աջնտեղ անգլիական և դենիէինյան նավատորմները ամենախիստ շրջափակում էյին սահմանել: Առաջաստաններէից ամեն մեկը, 10—12 տոնն բենզին հասցնելու համար՝ պետք ե ճղեր-անցներ պահպանվող գոտին: Այդ կնշանակեր, վոր նրանց կեսին վիճակված չեր ի կատար ածել դրված խնդիրները:

Յես տասնյութամյամի կոմյերիտական, լերկարժամանակ աշխատում էյի թուլլութիւնն ստանալ առաջաստանավերից մեկով գնալու համար, ընկերներս վախենում էյին, վոր լես չկարողանամ դուրս պրծնել աջնտեղ, վորտեղ կարող ե ճղել-անցնել ավելի փորձառու գործիչը: Եբբսպեղիցիան Բաթումից կազմակերպելու առաջին փորձն անցավ անաջող. նավանգստում աճազին քանակությամբ լրտեսներ էյին վիտում: Վորպես անգլիական իմպերիալիզմի խորհրդանշան, ալիքների վրա օրորվում եր «Թեգեյ» զրահակիրը: Նրա վեհ տեսքը, կարծես, հարկադրում եր մաքսանենգներին հրաժարվել բալլէիկների հետ կապ պահպանելու մտադրութիւնից:

Յերկրորդ փորձը Փոթիում ավելի հաջող եր: Այս նվազ կարևոր նավահանգստում պարագաները ավելի

Հրատարակ. № 1740

Պատկեր № 6583 (բ)

Պատկեր № 3816

Տիրաժ 4000

Պետրատի տպարան, Յերևան


բարեհաջող եյին: Մի քանի որվա վորոնումներէց հետո հաջողվեց կապվել նմանորինակ մի եքսպեդիցիայի հետ, վոր պատրաստում եր տեղական կուսակցական կոմիտեն: Բեռի պաշտոնական տերը համարվում եր Իրակլի Ա.ին: Յես հաշվվում եյի նրա ընկերակիցը:

«Յեստրատիա» առագաստավորի ընթացողին նկատելի առնված դեպի Փոթի-Կիրասոն-Սինոպ-Քերեմպե, հետո դարձ դեպի հյուսիս՝ Ղրիմ կամ Ողեսոս: Բոլոր փաստաթղթերը նշանակված եյին դեպի Պոլիս գնալու համար: Այսպիսով մինչև Քերեմպե նավը չեր կարող կասկածներ հարուցանել: Եքսպեդիցիայի գործում Իրակլին շահագրգռված եր դրամական վարձատրութլամբ և վորևե գաղափարական մղումներով չեր առաջնորդվում:

«Յեստրատին» մայիսի 9-ին ծով դուրս յեկավ: Դա 25 մետր լերկարութլամբ մի հին նավակ եր, վոր աշխատում եր լերկտակտ «Պաբեդա» շարժիչով: Հրամանատար Կրիլովը շատ չեր վստահում այդ շարժիչին: Բեռը տեղավորված եր տրոլմում և բիդոնների մի սասը միայն նավի տախտակամածի վրա: Փոթիից դուրս գալիս չկարողացանք թլուրքական դրամ ձեռք բերենք, ուստի ամենինչի բենզինով պիտի վճարեյինք:

«Յեստրատին» դեռ ևս քսան մղոն չեր անցել, յերբ շարժիչը փչացավ և առաջ շարժվեցինք առագաստներով: Բացի Կրիլովից և մեքենավար Գրիչկից՝ նավի ըսպասակազմի մեջ մտնում եյին Բոցմանը, լերկու նավաստի և մի պատանի: Բոլորը, ինչպես և մենք ձամբորդներս, տեղավորվել եյինք բաց լերկնքի տակ:

Յերկրորդ որվա վերջին «Յեստրատին» մոտեցավ անատոլիական ափին: Մեր աչքի առաջից անցնում եյին գեղանկար հրվանդաններ, ծոցեր, անտառապատ լեռներ, վորոնք ուղղահայաց իջնում եյին դեպի ծովը, և ժայռերին կպած կոկիկ, մաքուր (ավաղ, հեռվից միայն) թլուր




«Յեստրատին» մայիսի 9-ին ծով դուրս յեկավ: Դա 25 մետր լերկարութլամբ մի հին նավակ եր:

քական գլուղներ։ Ափի կողմից կանացի լացի նման աղա-
ղակներ ելին լավում։ Կրիլովը բացատրեց, վոր շնագայ-
լերն են վոռնում։ Դեմից պատահում ելին առագաստա-
վոր նավեր։ մենք սրում ելինք մեր ուշադրութունը.
այստեղ հաճախ ծովահեններ ելին հարձակվում։ Նախորդ
որը նրանք մի մեծ ճամբորդական. նավ ելին թալանել։
Պաշտպանության համար ունեյինք մի հրազան և յերկու
ատրճանակ։

Ուշ գիշերին «Յեվստրատին» խարխալ ձգեց Կի-
րասնում։ Վճռեցինք առավոտյան ափ իջնել։ Հրամա-
նատարը ուզում եր նորոգել շարժիչը։ Նրա կարծիքով
դա առանձնապես անհրաժեշտ կլինի Ղրիմի ավերին մո-
տենալիս, յերբ մեծ արագութուն կպահանջվի։ Կիրասո-
նում կարգին մեխանիկական արհեստանոց կար։

Լուսաբացին մաքսատան բարկասով «Յեվստրատին»
մոտեցան աստիճանավորներ և մի բժիշկ։ Մեզ գննեցին և
թուղ ավին ափ իջնել։ Բաց աստիճանավորներից մեկը
բողոքեց։ Դա մի կոմեդիա էր, վոր խաղացվեց կաշառք
կորգելու նպատակով։ Յերբ մենք հրամայեցինք մի քանի
բիզոն բարձել նրանց բարկասին, բոլոր արգելքները
վայրկենապես չքացան։

Անատոլիական քաղաքները ծովից են գեղեցիկ լերե.
վում։ Բաց վորքան անդուր են նրանք իսկապես։ Փողոց,
ները լի լեն թափթվուկներով և աղբով։ Վխտում են
ցնցոտիալատ լերեխաներ։ Առանձնապես անմաքուր են
հույն կանայք։ Ճզավոցները ականջ են ծակում։ Թվում
է, թե չըջապատողները հայհոյում են միմյանց։ Սակայն
դուք շուտով համոզվում եք, վոր այստեղ միանգամայն
խաղաղ է։ Բնակիչները պարզապես ալպիսի խոսելաձև
ունեն։ Շատ աղմուկ եր լավում սրճարանների կողմից,
վորոնք անթիվ են քաղաքի ծովափնյա մասում։ Այստեղ
նարդու և դոմինոյի խաղի ժամանակ աշխուժորեն չարա-



Յերկրորդ որվա վերջին «Յեվստրատին» մոտեցավ
անատոլիական ափին։

սահում են և առևտրական գործարքներ են կատարում: Թանձր ծխի միջով դժվար է հարևանին տեսնել: Համարյա բոլորը դալան ծխում: Փոքրիկ սեղանների առանձներով վիտում են ծառաները և փոքրիկ պնակներով թունդ սուրճ են բաժանում:

Տեղական խանութպանները պատմում ելին, վոր քաղաքը տազնապալի լե: Ժամանակ առ ժամանակ պարտիզանների խմբեր են հարձակվում, թալանում են վաճառականներին և լետ են գնում: Խմբերը կազմված են նախկին ասկյարներից*), վորոնք չեն ուզեցել զենքը հանձնել, անգլիական ռկուպացիոն զորքերին: Իրենց սոցիալական բնույթով մասն մեր «կանաչներին», այդ խմբերը հետագայում հանդիսացան վորպես վորդնաշար Քեմալ փաշայի բանակի համար: Վաճառականները վախենում ելին մեծ քանակությամբ ապրանք ունենալ:

Առանձնապես տուժում ելին հուլն խանութպանները, ալդ ժամանակաշրջանում Հունաստանը անգլիացիների ձեռքով պատրաստվում եր լեբրիտասարդ Թյուրքիային խեղդելու գերին: Քաղաքը ապշեցնում եր մուրացիկի իր արտաքինով: Բազմաթիվ կեղտոտ և պրակերես մուրացիկաններ ելին թափառում: Փողոցներում հանդիպում ելին՝ ծանր կավե կժերի տակ կռացած՝ չաղբաներով թրքուհիներ: Նրանց հետևից՝ ծխամորճը՝ ծծելով և լեզբեն քաշելով, գնում ելին նրանց ամուսինները: Յերբեմն մի տղամարդ առաջ եր քշում լեբկու բեռնակիր կնոջ:

Յերկորյա կայանից հետո «Յեվսարատին» ծով դուրս եկավ: Յերկինքը մռայլվում եր: Խոշոր ալիքներ ելին վրա վազում և ջուր մաղում մեզ վրա: Մութն ընկնելիս «Յեվսարատին» սկսեց կողքից կողք որորվել: Դեռևս

*) Թյուրքական զինվոր:



Վիտում են ցնցոտիապատ լեբկաներ: Ճզալիցները ահանջ են ծակում: Շատ աղմուկ եր լսվում սրճարանների կողմից:

յեղանակը չ'առանալու սկզբին մենք նկատեցինք, վոր դլփիններն սկսեցին ավելի հաճախ թռչկոտալ և հակառակ առաջման՝ միայն մի ուղղութիւնով: Սա մոտեցող փոթորկի նշանն էր: Նա յերկար սպասել չտվեց: «Յեփստրատին» մերթ քիթն էր ընկղմում՝ մերկացնելով դեկը և սաստկաբար շարժվող պտուտակը, մերթ բարձրացնում էր քիթը ալիքների վրա և ցուկը համարյա բոլորովին ընկղմվում էր ջրի մեջ: Հարկադրվեցինք շարժիչը դադարեցնել: Ալիքներն հոսում էին տախտակամածի վրայով:

Մուժը կոխեց: Գլխավերևը փայլատակում էր կայծակը: Մարդ վախով էր բռնվում, մայածելով վոր նավը կարող է բոցավառվել: Կատաղի ալեկոծութիւն մեջ մենք նման կլինելինք լողացող խարուկի՝ վառվելով մինչև փայտերի ածխանալը:

Ալեկոծութիւնն ավելանում էր: Նավը ձռնչում էր ալիքների հարվածների տակ: Նավաստիները լարված աշխատում էին:

Կրիլովն ինքը դեկը ձեռքն առավ: Հմուտ ձեռքերով դեկավարվող «Յեփստրատին» կատաղութիւնով խրվեց դեմ լեկող ալիքների մեջ, կտրում էր նրանց ուղիղ անկյունով և թուղ չէր տալիս, վոր հարվածէն ցուկին կամ կողին: Կրիլովը հրամայեց ծովը նետել մոտ 50 բիզոն: Մենք վշտացած նայում էինք, թե ինչպէս ՌՍՖՖՀ-ի համար այդ թանգարժեք բեռը նախ ծածկվում էր ջրի տակ, ապա մի քանի վարկյանից հետո դուրս էր գալիս ջրի լերեսը և «Յեփստրատին» քամակից նոսր շղթա կաղմում:

Վախենալով, վոր մթութիւն մեջ կարող ենք ավելաբար մենք ընթացքն ուղղեցինք դեպի բաց ծով: Մենք չգիտեինք՝ վորտեղ ենք գտնվում: Կրիլովը յենթադրում էր, վոր «Յեփստրատին» գտնվում է Սամոսից



Կրիլովը հրամայեց ծովը նետել մոտ 50 բիզոն:

կամ Բաֆրալից վոչ հեռու: Գիշերը հեռվում ինչ վոր տեղ կրակներ յերևացին: Միայն հետևյալ կեսորին ալեկոծութունը սկսեց հանդարտվել: Շուտով ծովի մակերևույթի վրա սկսեցին վազել միայն մանր ալյակներ: Առաջատները թուլացան և «Յեվստրատին» տանում ելին շատ ավելի դանդաղ, քան առաջ: Կապարյա ամպերի յետևից յերևաց արևը: Նա տաքացրեց մեզ, վոր թըրջված ելինք, սառած, տանջված անքուն գիշերից, ծովալին հիվանդութունից և բոլոր ապրումներից: Դըլփիններն ուրախ թռչկոտացին: Հեռվում յերևաց ափը, իսկ մի քիչ հետո՝ ինչ վոր քաղաք, Դա Սինոպն եր: Հանգիստ, տաք կերակուր և քուն նախատեսելով, մենք աշխուժացանք:

Մոտավորապես ժամի 5-ին, «Յեվստրատին» 8—9 մղոնի վրա մոտեցավ ծովախորշին: Նոր փորձանք. փչում էր հանդիպակաց բամի, և մենք առաջատներով չեղինք կարողանում մոտենալ:

Շարժիչը հրաժարվեց աշխատելուց:

Հարկադրված ելինք գնալու առաջատներին ոգնությամբ, փոխելով նրանց գիրքը այս կամ աճի կողմի վրա: Մենք դանդաղ մոտենում ելինք ափին: Այն ճանապարհը, վոր նորմալ պայմաններում կպահանջեր մեկ և կես ժամ, մեր առաջատավորը անցավ ավելի քան չորս ժամում: Վերջապես այնքան մոտեցանք, վոր նավակները լողացին «Յեվստրատին» հանդիպելու: Խաբխախ ձգեցինք: Նավակներից մեկը կիպ մոտեցավ և ցած բերեց մաքսատան աստիճանավորին և բժշկին: Բժիշկը հարց ու փորձ արավ՝ հիվանդներ չկան արդյոք, թուղիկ հալացք գցեց մեր գեմքերին և թյուրքական ուժեղ ակցիետով ասաց՝ «Գարելի յե»: Աստիճանավորները հայտնեցին, վոր մաքսատնից անկախ՝ վոչ մի բիզոն ծախել չենք կարող, և,

ինչպես Կիրասոնում, «փեշքեշ»*) ստանալով՝ հեռացան: Նավաստիները և Բոցմանը մնացին նավի վրա, իսկ մենք ափ իջանք և մեռածի պես հանձնվեցինք քսան ժամյա քնի: Մի շաբաթվա ճանապարհորդութունից հետո՝ մենք առաջին անգամն ելինք հանված քնում:

ԶՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՓԻՆ ՅԵՎ ՋՐԻ ՎՐԱ

Սինոպը մեր թյուրքական արկածների վերջին կետն է: Այստեղից ծով պիտի դուրս գայինք արևմտյան ուղղությամբ և ապա Գերեմպելի միջուրեյականի վրա թեքվելինք դեպի հյուսիս՝ ընթացք վերցնելով դեպի Բալակլավա: Մենք վորոշեցինք նայել, թե Ղրիմ մաքսանենգային ապրանք տանող ֆիյուլագաներ չկան նավահանգստում և նրանց տերերից իմանալ շրջափակման խստության մասին:

Նեք փողոցների յերկու կողմից, փոքրիկ սնդուկներով առաջ ծալապատիկ նստած ելին սարաֆները:

Նրանց մոտ ապակու տակ կարգին դարսված ելին ոտարերկրա թղթադրամները և հնչուն զրամները: Այստեղ կային նաև նիկոլայան հարյուր և հինգհարյուր ուղբլիանոցներ: Նրանք դեռ ևս շրջանառութուն ունեին...

Կրիլովը ճաշին հաղորդեց, վոր ալեկոծութունից հետո շարժիչը և առաջատները կարոտ են նորոգման:

Ճանապարհորդութունը կարելի չեր շարունակել վոչ շուտ, քան յերկու-չերեք օրից հետո: Ճանապարհորդական շոգենավի նավահանգիստ գալու ժամանակ մենք ափին ելինք: Կրիլովը խորհուրդ տվեց, վոր չսպասենք մինչև մեկն ու մեկի նավից իջնելը, այլ մենք զնանք նավ և այնտեղ նորութուններ իմանանք: Պարանի սանդուղքով նավ

*) Ընծա:

բարձրանալով՝ կրիլովը մոտեցավ ծանոթ մեքենավարին, իսկ լեռ գրողիցի բռնվեցի յերկու սպալի հետ:

— Բարի լեղեք, Ղրիմի մասին տեղեկություններ չունե՞ք արդյոք:

— Տեղեկությունները շատ լավ են, — պատասխանեց սպաներից մեկը, — Ղրիմը մաքրված է բալչլիկներից: Գեներալ Սլաշեվը արշավում է Ուկրաինա վրա: Շուտով ամբողջ Ուկրաինան մերը կլինի:

Յես ուրախ դեմք ընդունեցի, շնորհակալություն հայտնեցի տեղեկությունների Գամար և հեռացաւ: Նավի սուլիչը հնչեց: Պետք էր ավի վերադառնալ: Կրիլովը ու Իրա կլին մոտավորապես նույնպիսի տեղեկություններ ելին ստացել: Այնուամենայնիվ գժվարանում էինք հավատալ:

Մենք այդ համարում էինք եմիգրանտական հերթական սուտ:

Հաջորդ ուրը տոն էր: Քաջաքից գուրս տեղի յեր ունենալու սովորական տոնական զվարճությունը՝ կոխ բըռնելը, վորին նայելու գնաց և մեր խումբը:

Այնտեղ արդեն մեծ ամբոխ գտանք: Հրապարակում հպարտ ման էր գալիս տեղական փահլեանը: Նա դիմում էր հասարակության և ցանկացողներին հրավիրում էր կոխ բռնելու, և ծաղրանքով ծիծաղում էր, վոր վոչ վոք չի համարձակվում նրա մրցականչն ընդունել: Նրա պոռոտախոսությունը դիպավ մեր ուղեկիցներից մեկի, ուժեղ Կոտե 2-ձեյին: Նա հայտնեց, վոր ուզում է չափվել դրա հետ: Ամբոխի մեջ լավեց հավանության թնդուն: Ամբոխը հավատում էր իր սիրելիի անհաղթելիությանը: Կոտեն և հակառակորդը անցան շրջանի միջով: Վայրի գազանների նման դարանամուտ էլին լինում միմյանց և լեռ էլին ցատկում մյուսին մոտենալիս: Յեթե ֆրանսիական կոխի ժամանակ թույլ է տրվում բռնել միայն գոտիից վերև, թյուրքականում հակառակ պահանջներ են դրվում, — կոխ բռնողները միմյանց վտառելից են բռնում,

հաճախ գործադրում են վոտք խփելը (սալմա տալ) և այլն: Կոխ բռնողների իրանները թեքված են լինում և հիշեցնում են չորսոտանի մարդկանց:


Կոտեն առաջ յերբեք վարժված չէր թյուրքական կոխին: Բացականչություններն ու թնդունը յերկուսին էլ զրգուում էլին: Հանկարծ Կոտեն ճարպիկ կերպով բռնեց հակառակորդին և մի ձևով, վոր ֆրանսիական կովի մեջ կոչվում է «տուր-դը-տետ», խփեց նրան գետին: Թյուրքը, վոր այսպիսի պրիմիչեր սպասում, ուշաթափվեց: Ամբոխը կատաղեց: Կոտեյի հենց քթի տակ շարժվող ձեռքերը և սպանալից աղաղակները մեր մեջ առաջացնում էլին ինքնադատաստանի յերկուգ: Մենք, ձեռքներս ատրճանակների վրա, մոտեցանք: Մեր ծանոթ մաքսատան աստիճանավորները նույնպես վախենում էլին վատ լեքից: Նրանք հանգստացնում էլին ամբոխին՝ նշելով, վոր Կոտեն հյուր է և նրա անձնավորությունը վիրավորանքի չպիտի յենթարկվի:

«Փահլեփանն» ուշքի յեկավ և մոլորված չորս կողմն էր նայում: Ծիշտ թե սուտ, դա նրա առաջին պարտությունն էր: Սինոպի բնակիչներին սա մեծ յեղելություն էր թվում:

Հետևյալ ուրը «Յեփսարատին» նորոգված էր: Յերեկոյան կարելի չէր ճանապարհվել: Սինոպից հետո՝ կամ մեր վոտքերի տակ պիտի զգայինք խորհրդային հողը, կամ, արդեն, այլևս յերբեք չպիտի վոտք դնեյինք ամուր գետին: Մի որ ևս մենք որինական վաճառականներ էլինք: Հետո, հանդիպման ժամանակ, անգլիական հեծանավերը մեզ հետ հրետանու լեզվով կխոսեյին:

Սակավում էր ճանապարհի ամենապատասխանատու մասը:

Դուրս գալուց մի քանի ժամ առաջ, հյուրանոցում մենք հանդիպեցինք 45 տարեկան, ուռսի տեսքով մի հաստ



Դա Ղրիմի խոշոր կարվածատեր եր, վոչ վաղուց
բայլշեկներեց փախած իր թիկնապահի հետ: Ճաշին
կարվածատերը ինքը մեզ հետ խոսք բացեց. նա յերկար
հայհոյում եր «գաղան» բայլշեկներին:

տղամարդու, վոր գնում եր մաուզերով գինված լեռնակա-
նի ուղեկցությամբ: Հուրանոցի տերը մեր հարցին պա-
տասխանեց, վոր դա Ղրիմի խոշոր կարվածատեր ե, վոչ
վաղուց բայլշեկներեց փախած իր թիկնապահի հետ: Նա
շատ ե կարոտել Ղրիմում թողած ընտանիքին:

— Նա վոսկով տասը հազար ուսուլի յեր առաջար-
կում այն մաքսանենգին, վորը կարողանար նրա ընտանի-
քին դուրս բերել հասցնել Սինոպ: Դեռևս ցանկացող չի
յերևում,— պատմում եր հուրանոցատերը:

Ճաշին կարվածատերը ինքը մեզ խոսք բացեց և կըր
կնեց մեզ արդեն ծանոթ պատմությունը: Նա յերկար
հայհոյում եր «գաղան բայլշեկներին», ամեն տեսակ ա
նեծք եր թափում նրանց գլխին և խոստանում եր սեփա
կան ձեռքերով քերթել ձեռքն ընկած առաջին բայլշեկի
գլխի կաշին: Մենք ցավակցաբար հրահրում ելինք և մեր
կողմից վոչ պակաս գաղանություններ ելինք խոստանում:
Ճաշի վերջին կարվածատերը հարբեց և այնպես զգացվեց,
վոր սկսեց բոլորիս գրկել, խնդրում եր մեր կովկասյան
հասցեները, խոստանալով անպայման մեզ հուր գալ,
յերբ ընտանիքի հետ այնտեղ գա:

Մենք շատ դատարկ-մատարկ բաներ ասինք, հաս-
ցեներ տվինք, իհարկե «փչոցը հետը» և սրտագին հը-
րաժեշտից հետո ճանապարհ ընկանք: Հաստիկը յերկար
շարժում եր թաշկինակը՝ մաղթելով մեզ հաջող առուտուր:

Գիշերը մենք գնում ելինք վեց հանգուլցի արագու-
թյամբ: Հետևյալ ուրը լողում ելինք կանաչ, գեղանկար
ափերի մոտով: Կես գիշերին յերեվաց լուսատու կես՝
կերեմալի հրվանդանի փարոսը: Արթնացանք, յերբ ար-
դեն նոր ընթացք ելինք բռնել և արեր գլխավերևում եր
կանգնած: Հեռվում սարեր ելին յերևում: Տազնադով
նայում ելինք հորիզոնին, բաց վոչ մի կասկածելի բան
նկատել չելինք կարողանում: Հայելանման մակերևույթը,

Բայլշեկ, մաքսանենգ, զեռնապահ, զեռնապահ, զեռնապահ



ուր գլխիններն ելին կայտառ խաղում, փռվում եր շուր-
ջը տասնյակ մղոններով: Դիվիզիոնները լողում ելին կողք-
կողքի «Յեփստրատի» հետ՝ կամ առաջ անցնելով, կամ
յետ մնալով և բռնելով մեր շարտած պաքսիմատները: Ա-
ռազաստները քիչ ելին ուռած: «Յեփստրատի» ընթանում
եր շարժիչի ոգնությամբ: Կեսորին յոտ շարժիչը կանգ-
նեց: Այժմ շարժումը դարձավ հազիվ նկատելի: Յերբեմն
թվում եր, թե մենք կանգնած ենք տեղում:

— Վաղը, չեթե լավ չեղանակ լինի, ասաց Բոցմանը
— հյուսիսում կտեսնենք Ղրիմի, իսկ հարավում՝ Թյուրքա-
կան լեռները:


Յես դրան հավատալ չկարողացա՝ չե՞ վոր 140 մղոն
եր:

Արևն ալրում եր. ծածկոցը քաշեցինք:

Վորոշվեց զբաղվել վորսորդությամբ: Նավաստիներից
մեկը բերեց յերկարափայտ նիզակը, յերկու մետր յերկարու-
թյամբ, յերկաթյա ծայրով և յերկու շարժվող մատներով,
վորոնք, հակառակ շարժման ժամանակ, բաժանվում ելին:

Նիզակին յերկար թուկ կապեցին և ազատ ծայրը ամ-
րացրին «Յեփստրատի» կողին: Նավաստին կանգնեց ձրգ-
ված շղթայի վրա, վորի մի ծայրը ամրացրած եր
«Յեփստրատի» քթին և մյուսը Բուկչպիլին: Շըղ-
թայի վրա կանգնած՝ նա նայում օր ջրին, սպասելով մին-
չև վոր գլխինը կթռչեր նրա տակ, և հարմար ըողելին
նետում եր նիզակը: Յեթե նետումն հաջող եր լինում,
ջուրն իսկույն ներկվում եր արյունով: Կենդանին թուկը
յետ տալով փախչում եր: Նրան դուրս քաշելու համար
յերեք հոգով ջանք ելինք լարում: Զրից դուրս հանելուն
պես՝ նա անգոր եր դառնում:

Յերկու ժամվա վորսորդության ընթացքում ութ գլը-
փին սպանեցինք:



Հանկարծ մեկը նկատեց հաժանափի հազիվ տեսանելի ուրվագիծը...
Գնական չկար... Հաժանափը գալիս եր «Յեփստրատի» ճանրտն կտրելու:

ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻ ՀԱԾԱՆԱԿԸ

Գիշերը հանգիստ անցավ: Քամին ուժեղացավ և բարենպաստ եր «Յեվստրատիի» համար:

Արևի ճառագայթները մեզ արթնացրին: Յերկինքը վճիտ եր: Նավը լերեկվա նման ճեղքում եր ծովի ջինջ հայելանման մակերևութը: Վորի կանաչ ալիքների մեջ նեփ պես սլանում ելին զլփիսները: Այժմ մենք գտնվում ելինք Սև-ծովի ուղիղ մեջ տեղը: Արևը դեռևս գոլորշիացում չեր առաջացրել, և թվում եր, թե տեսողության հասանելիությունը սահման չունի: Բոցմանի խոսքը հաստատվում եր՝ ինչ վոր հեռվում յերևում եր փոքր Ասիայի լեռների լերիզավոր շրջագիծը հետևում, և Ղրիմի—առջևից: Կարելի չեր կարծել, վոր սրանք ամպեր են, վորոնք լեռների գծազրույթուն են ընդունել: Յես աչք ժամանակ համոզված չեյի, ինչպես համոզված չեմ և այժմ՝ իրոք դրանք լեռներ ելին, թե՛ մենք գործ ունեյինք տեսողության պատրանքի հետ:

Կեսորին մոտ քամին ուժեղացավ: Նավը զնում եր վեց հանդուցի արագությամբ: Մենք մտածում ելինք աչք մասին, վոր վաղը լերեկության դեմ զլինենք նպատակի մոտ, յեթե զիականացած լողալիս չլինենք ալիքների վրա: Գիշերը առանց լուսի ելինք զնում: Մինչև անգամ կայմի լապտերը հանգցրած եր:

Առավոտյան մենք պարզ տեսնում ելինք լեռները: Թվում եր, վոր նրանք շատ մոտ են: Բայց, իրոք, նրանք հեռու ելին վոչ պակաս քսան մղոնից: Մենք բոլորս լարված նայում ելինք հեռուն և վախենում ելինք «շրջափակումը» տեսնել: Յեղանակը թխտում եր: Այդ մեզ ուրախացրեց—տեսանելի լինելը պակասում եր: Յերեվացին ճայեր:

Հանկարծ ինչ վոր մեկը նկատեց հաժանավի հաղիվ տեսանելի ուրվագիծը... կասկած չկար... Հաժանավը գա-

լիս եր «Յեվստրատիի» ճամբանկտրելու, Վե՛րջը: Միամբարություն կլիներ կարծել, վոր մեզ կփրկեր այն բացատրությունը, թե մեր ընթացքը ուղղված ե գեպի վորեւե վոչ խորհրդային նավահանգիստ: Այդ խորամանկությունը կարող եր հաջողվել թյուրբական ակերից վոչ հեռու: Բայց այստեղ ուշ կլիներ ժխտել մեր ճանապարհի ճշմարիտ նպատակը: Կրեյսերը, անցնելով մեր թիկունքը՝ մոտենում եր, Կրիլովը հրամայեց հագնել խցանի գոտիները:

«Արդյոք լավ չի՞ լինի, վոր հենց հիմա ջուրը թռչնամ», մտածեցի լես: Չե՛ վոր միևնույն ե, հարկադրված պիտի թռչնեք, թեև ակին հասնելու հույս չկա: Մինչդեռ, հաժանավի կրակ բանալուց հետո թռչելը ուշ կլինի: Բենզինով բեռնված «Յեվստրատիի» առաջին դիպած ուղիքից ողբ կցնդի: Յեվ յեթե լողալով չկարողանանք նրանից բավականաչափ տարածություն հեռանալ, միևնույն ե, թափված բենզինի կրակը կհասնի մեզ:

Հաժանավը յերկու մղոնաչափ մոտ յեկավ մեզ: Նորնթացքը դանդաղեցրեց, ապա սկսեց ցուրկը մեզ դարձնել: Այս ինչ կարող եր նշանակել: Միակ յենթադրությունն այն եր, վոր նա մտադիր ե գնդակոծել մեզ ցրուռեկի հրանոթներից: Պատրաստ՝ նավից դուրս թռչելու՝ մենք լարված նայում ելինք թսդանոթներին, հաշվելով, վոր անա ուր վոր ե, կտեսնենք արձակումի փայլը: Մեր միջի տարածությունը հեռոցհեռու սկսեց մեծանալ:

Բանն ի՛նչ ե:

Միթե հաժանավը վարժական նպատակներով ուղղում ե բարդացնել խնդիրը — թողնել մեզ մեծ հեռավորության վրա և ապա գնդակահարել: Հրետանին լուռ եր, և մենք ավելի ելինք ջղայնանում: Թվում եր, թե լավ կլինի, վոր մեզ շուտ գնդակոծելին: Գոնե անհաջողության մեջ չելինք տառապի:

Վերջապես յերեացին «ցանկալի» յերկու փալկաոց և, ջրի սյուներ բարձրացնելով, մոտիկ շլապացին հրետանային արկերը (снаряд)՝ Յեվ միայն այդքան։ Հետո նորից լուռ լուռ...

Հաժանավը հեռանում եր... Մթնում եր... Մենք վոչինչ չեյինք հասկանում։ Կրեյսերը ինչ-ինչ պատճառներով չեք ուզում մեզ խորասուզել։

— Լավ ե, վոր մենք գիշերն ենք հասնում, — ասաց Կրիլովը։ Անհատելի մնալու շանսերը շատ են, իսկ յեթե նկատեն ել, դժվար կլինի գնդակոծել։

Յեվ քիչ հետո ավելացրեց։

— Զլինի թե Սեվաստոպոլի խորշում «շրջափակին» հանդիպենք։ Սուս ու փուս չանցնենք Սեվաստոպոլի մոտից և խարխալ գցենք Յեվպատորիալում։ Փոքր քաղաք ե, վորպես նավահանգիստ մեծ նշանակություն չունի։ Վոչ վորք ուշադրությունը չի գրավի։

Համաձայնեցինք։

Մուժն եր, յերբ Սեվաստոպոլն անցանք, Ալփա ինքն իրեն կարելի չեք շնորհավորել վողիսականի բարենաշող վերջավորությունը։ Ելի մի չորս-հինգ ժամվա յերթ և մենք խարխալ գցեցինք։ Բոլոր վտանգները հետևը մնացին։ Խոր գիշերին մոտեցանք Յեվպատորիային։ Վորոշեցինք առավոտյան ցամաք դուրս գալ։ Քաղաքը հավանորեն գինվորական դրուժյան մեջ ե։

Ապրած հուզումներից հետո բնել եյինք ուզում։ Ուրախացած շնորհավորում եյինք միմյանց։ Վերջապես շատ արկածներից հետո, մեզ ղգացինք Խորհրդային Ռուսաստանի ազատ քաղաքացիներ։

ЗВОІРЕНКАЛЧНОУ ЕНФ УМІСАУ ԳЧԱՐԴԻԱԿԱՆՆԵՐԻ ՄՈՏ

Յերբ աչքերս բաց արի՝ արդեն լուսանում եր։ Ծովի վրա կանգնած եր մառախուղ։ Վոր ծածկում եր ավել։ Խոշոր շենքերի և յեկեղեցիների գծագրությունները

նշմարվում եյին աղոտ կերպով։ «Յեվստրատից» վոչ հեռու, նրա յերկու կողմից, խարխալների վրա որորվում եյին առագաստավորներ։ Բոլորն արդեն վտառի վրա եյին և ուրախագին ժպտում եյին միմյանց։

Ափից բաժանվեց չորս թիանի նավակ, վոր ուղևորվեց դեպի «Յեվստրատին»։ Նրա մեջ 5 հրացանավոր մարդ եր նստած։ Տարրինակ ե՝ մոտեցողներին տեսնելով, սկզբից մենք ուրախանում եյինք։ Բայց ըոպե առ ըոպե մեզ սկսեց պատել ինչ վոր չգիտակցված տագնապ։ Մենք չեյինք կարողանում հասկանալ ինչից ե այդ հուզմունքը։ Բնազդն ինչ վոր վատ բան եր թելադրում։ Մեր տագնապի պատճառը հանկարծ հասկանալի դարձավ՝ կաթնագուլն մառախուղի միջով, նավակով յեկողների ուսերին նկատվեցին կարմիր ուսադիրներ։ Նավակում կողակներ եյին նստած սպայի հետ... Վոնց վոր սառը ջուր լցնես մարդու գլխին։ Միթե բոլոր հույսերը և սպասելիքները, յերեկվա ցնծությունները — բոլորն ապարդյուն անցան։ Իսկ մենք ուրախանում եյինք՝ «պատռեցինք շրջափակը», «յեկանք մերոնց մոտ», «բանակին կոչենք բենգինով» և այլն։ Մի անդամից հասկանալի դարձավ և այն, թե ինչու յերեկ հաժանավը այնպես ծուլ կերպով եր մեզ գնդակոծում։ Այսինքն թե՛ միևնույն ե, չեն փախչի։ Յես հազիվ կարողացա պատառոտել և ծովը նետել ինձ մոտ յեղած կուսակցական թղթակցությունը։

— Վորտեղից ե նավը։

— Փոթիից, բենդին ե բեռնած...

Սպան բարձրացավ «Յեվստրատի» տախտակամածը կողակի ուղեկցությունը։

— Ո՞վ ե տերը։

— Յես և կամպանիոններս, — բոլորովին հանդիստ պատասխանեց Իրակլին։


— Տերերը և հրամանատարը ինձ հետ գեպի տալիս։ Մյուսները դուրս չգնան նավից։

Սպան զուսպ էր, բայց նրա տոնի մեջ չարանենգ շեշտեր էլին ղզացվում։ Մենք նստեցինք նավակը և զբնացինք։ Նա տեղեկացավ՝ բոլոր փաստաթղթերը մեզ մոտ են, և հայտնեց, վոր պարետության մեջ մոտ լերկու ժամ պետք է սպասել մինչև գնեցողը կգարժի։ Մենք խնդրում էինք պատմել՝ ինչպես է քաղաքի դրությունը, հեռու լին շարտված բալլշիկները։ Զուսպ պատասխանեցին հասկացանք, վոր կարմիրները Յեվպատորիայից վրձնդված են չորս ուր առաջ և նահանջում են գեպի հյուսիս։ Պարետության մեջ մի ուրիշ սպա, վոր պարետի ոգնականն էր, սկսեց հարց ու փորձ անել։ Ինչ բացատրություն տանք, թե ինչո՞ւ կոստանդնուպոլսի փոխարեն ընկել ենք Դրիմ։ Յերբ «Յեվպատորիա» Սինոպից դուրս էր գալիս, մենք չեղինք կարող ճշգրիտ տեղեկություններ ունենալ բալլշիկներին Դրիմից վճռելու մասին։ Հեռակապես, բենգինը նրանց էր հատկացված։ Դրություն փտանգավորությունն ավելանում էր նրանով, վոր վոչ մի նախնական պայմանավորում չունեինք, թե ինչպես պատասխանենք ալապիսի դրություն ժամանակ։ Պետք է դուրս պրծնեինք բախտի բերմամբ։ Հարցուփորձ անողը զգացնել տվեց, վոր մեր վիճակը կախված կլինի այն բանից, թե նա ինչպես կղեկուցի գնեցողը կարիսնովին։

— Ձեր վարից (բաղմիմաստ հայացք մեզ վրա) կերևա թե դուք ինչ մարդիկ եք...

Մենք հասկացանք՝ կաշառք է ուզում։ Բանը նրանով վերջացավ, վոր նա առաջարկեց լերկույան հանգիպել «Ռոսսիա» բեստորանում, իսկ առաջիկա «ավելորդ» համարեց մեր հանդիպումը գնեցողը կարիսնովին հետ և ստորագրություն վերցրեց չմեկնելու մասին։

Կարծես թե վերով դուրս թռանք պարետատնից։ Մենք



Հարցուփորձ անողը զգացնել տվեց, վոր մեր վիճակը կախված կլինի այն բանից, թե նա ինչպես կղեկուցի գնեցողը կարիսնովին։

վորոշեցինք ինչպես հարկն ե վճարել, միայն թե զլուխներս ողակից ազատենք: Յերեկոյան պայմանավորված տեղն եյինք: Այգու անկյուններէից մեկում տեսանք հինգ սպա, վորոնք սեղանի մոտ կենդանի զրույց եյին անում: Մեզ տեսնելով՝ պարետի ոգնականը մոտ հրավիրեց, ներկայացնելով, վորպես Վրաստանից յեկած իր բարեկամներն: Խումբը քիչ քեֆով եր: Մի փոքր հետո խումբը մեծացավ: Սեղանները կցեցին: Մեր ծանոթները խմելով իրենց աղմկալի և անզուսպ եյին պահում: Հետագայում մենք իմացանք, վոր մեր քեֆընկերներն եյին տեղական հակահետախուզութեան պետը, յերրորդ կորպուսի հակահետախուզութեան պետը ե կորնիրովյան գորագնդի մի տեղակալ, վորը Յեվրոպայում բժշկվում եր:

Գիշերվա ժամի տասներկուսին մոտ, խիստ հարբած, հաղիվ կանգնելով վոտքերի վրա, սպաները ցրվեցին տրները: Իրակլին վճարեց հաշիվը տեղական դրամով, փոխադրած վոսիւլ՝ 80 ռուբլի: Հոգնած, բայց գոհ նրանով, վոր առաջիմ գործերը բարեհաջող են գնում, հյուրանոցի համարում քուն մտնելով, մենք մտածում եյինք՝ ինչ ձևով տանք պահանջվող կաշառքը: Հետևյալ առավոտը սպան ինքն յեկավ մեր մոտ:

— Այսոր թուղթ պիտի խաղացվի:

— Մենք հասկացանք, վոր նա այս յեղանակով ե ուղում փողն ստանալ: Հենց նույն յերեկոյան Իրակլին նրան տարվեց 200 ռուբլի: Խաղի ժամանակ սպան հավաստիացրեց Իրակլուն, վոր մեր մասին Լարիոնովին կգեկուցի «ամենաբարենպաստ կերպով», բայց, վոր գենեբայը կպահանջի մեր բեռի բռնագրավումը, վորովհետեւ քաղաքում բենզինի պակասութիւն ե և ծախու չկա: Մենք աւաչեցինք:

— Մի կործանեք: Չե՞ վոր քալը կնշանակի մեզ՝ ազ-

նիվ վաճառականներին աշխարհե աշխարհ գցել: Ռզնեցեք մեզ բենզինը ազատ գնով վաճառելու:

Սպան կոտորովում եր, մատնացուց անելով պարետի համառութիւնը, բայց վերջում խոստացավ «բարի խաբ ասել», նորից կաշառք ախարկելով: Յերեկո որից հետո մենք վաճառելու թույլտվութիւն ստացանք: Մեր «բարեկամը» հետագայում յերգվում եր, վոր ստացած կաշառքը բաժանել ե պարետի հետ:

Այժմ կարծես թե վտանգն անցել եր, բայց չես վախենում եյի ուղեկիցներիցս, մանավանդ նավաստիներից: Հարբած դրութեամբ նրանք հեշտ կարող եյին տապալել մեզ: «Յեվստրատիի» խմբի հետ հաշիվներս ուզում եյի փակել նաև այն պատճառով, վոր նավի հետագա կանգնելը ավելորդ ծախս եր:

ՄԵՆԲ ԴԱՌՆՈՒՄ ԵՆԲ «ԱՋՆԻՎ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ»

Իրակլիի հետ մենք սկսեցինք մտածել, վոր ամբողջ բենզինն ափ իջեցնենք և «Յեվստրատիին» բաց թողնենք խաղաղութեամբ: Սկսեցինք քաղաքում պահեստի տեղ վորոնք:

Մի շաբթից հետո բեռն ափին եր: Առուտուրը վաս եր գնում. քիչ եր պատահում, վոր մի անգամից 30—50 կիլոգրամ ավելի վերցնեյին: Սա ձգձգումով եր սպառնում իսկ մենք ուզում եյինք վորքան հնարավոր ե շուտ հեռանալ: Միևնույն ժամանակ չեյինք ուզում «Յեվստրատիի» խմբի հետ հաշիվները լուծարքի յենթարկել, պետք եր շարունակել նրա կախումը մեզնից այնքան՝ մինչև եր շարունակել նրա կախումը մեզնից այնքան: Այս պատվոր ինքներս Յեվստրատիայից հեռանայինք: Այս պատճառով մենք վճռեցինք աղ գնել (այն ժամանակ ամենաձեռնառու ապրանքը) ու «Յեվստրատին» ուղարկել Բաթում և խմբին միայն այստեղ վճարել:

Խոսակցութեան ժամանակ Իրակլին համարում էր, Վոր լես շնորհակալ պետք է լինեմ ճակատագրից: Ազգե-
սի պես թալակն ընկնելով՝ լես անվաս մնացի: Նա հա-
մառորեն խորհուրդ էր տալիս Կովկաս վերադառնալ: Իսկ
լես վճռել էլի անցնել առաջ՝ Մոսկվա:

Մի անգամ մեր ուղեկիցներից մեկը՝ Սաշա Կ. ձեն
յեկավ հյուրանոց մի արևելյան արտաքինով, անծանոթ,
30-ամյա տղամարդի հետ: Նա նրան ներկայացրեց, վոր-
պես հայրենակից ինժեներ Փիրումովի, վորի հետ ծանո-
թացել էր բնատրանում: Մեր գրութեան մեջ առանձնա-
պես պիտի գգուլը լինելինք ծանոթութունների խնդրում:
Մտքումս Սաշային հայրոջցի թեթեմատութեան համար:
Բայց շուտով բարեկամացանք Փիրումովի հետ:

Նա ապրում էր գերմանացի Սալիշի պանսիոնում,
Սենատորյան փողոցի վրա, քրոջ և սրա ընկերուհի Նաս-
տիայի հետ:

Փիրումով պատմում էր, վոր իրանք քիչ առաջ են
փախել Մոսկվայից, պատմում էր բայլշվիկների գաղա-
նությունների մասին և վշտանում էր, վոր նրա ազգա-
կանները մնացել են «Սվլեպիսցում»: Առուտուրից ազատ
ժամերին մենք միասին էլինք անցկացնում:

Մի անգամ Փիրումովը այգում գրոսնելիս, դիմեց ինձ՝
խնդրելով, վոր նրան «Յեստրաօի» ով Կովկաս ուղարկեմ:
Նրա խնդիրն ինձ զարմացրեց: Ինչ բավականութուն՝ ճամ-
բորդել առաջատարովոր նավակով, ծալահեղ անհարձար
պայմաններում, յերբ կարելի չէ հրաշալի կերպով տեղ
հասնել հարմարավոր ճանապարհորդական շոգենավով: Մի
քիչ շփոթմունքով նա բացատրում էր, վոր սարկիի պատ-
ճառով վախենում է մոբիլիզացիայից: Իսկ շոգենավային
ընկերությունը սոմսեր միայն փաճառում է զինվորական
հրամանատարության թույլտվությամբ: Յես խոստացաւ նը-

րան ուղարկել, և մենք համաձայնվեցինք այս բանը գաղա-
սի պահել:

Ոգոստոսի կեսին նշանակված էր «Յեվստրաօի» ու-
ղեկորումն աղի բեռով: Իմ պնդումներից հետո՝ Իրակլի
համաձայնեց Փիրումովի ուղարկելուն, իսկ ինքը վորոշեց
զնալ ճանապարհորդական շոգենավով: Յես մի քանի որ
ել պիտի մնալի Յեվստրաօիում և ապա գնալի դեպի
հյուսիս, վորպեսզի վորևե տեղից անցնեմ ֆրոնտը և ընկ-
նեմ Մոսկվա: «Յեվստրաօի» դուրս գալու որը, Փիրու-
մովը և քույրը նավակով յերեկոյան մոտեցան «Յեվստրա-
օիին» և մտան տրյումը: Յես ու Իրակլին արդեն տալիս
տակամածի վրա էլինք: Խարխալը բարձրացնելուց տասը
րոպե առաջ, յես իջա տրյումը՝ Փիրումովին հրաժեշտ տա-
լու: Դեռ սրանից մի քանի որ առաջ մեջս կանգնած էր
ծնվել, վոր Փիրումովը վոչ միայն վորպես գորակոչի չեն-
թակա չէ վտանգված, գաղտնապահութեան մի քանի ձևեր,
փողոցներում լես նախելու սովորությունը՝ նկատելու հա-
մար, թե լրեսս չի հետևում արդյոք և զանազան այլ
նշաններ, ինձ մտածել էլին տալիս, վոր նա «մերն» է:

Այստեղ տրյումում հանկարծ միտք հղացա ըիսկ ա-
նել և հարցը ուղղակի դնել:

— Յեկեք ազնվորեն խոսենք: Յեթե լես սխալվել
եմ, դուք ինձ համար սարսափելի չեք: ձեզ ալլես տալի չեն
թողնի: Իսկ լեթե դուք ուղենաք մատնել ինձ Բաթումում՝
ուշ կլինի: Վաղը իմ հետքը կկորչի Յեվստրաօիում:
Յեվ ահա—լես բայլշեվիկ եմ: Անդրյերկովից ուղարկված
եմ հատուկ հանձնարարությամբ: Ինչպես տեսնում եք՝ ըն-
կել եմ սպիտակների մեջ և առաջիմ դուրս եմ պրծել: Իմ
ազգանունը վոչ թե Բարխուդարյան է, այլ Շահումյան,
ձեզ, յերևի, ծանոթ է: Դուք ով եք:

Փիրումովը գունաավեց. նա համոզված էր պրովա-
կացիայի մեջ, բայց վերջի վերջո, ըստ յերևույթիս, ան-

կեղծ տոնը և վերջին խոսքերը նրան կոտրեցին: Շտապ, փորպետի հասցնի—տախտակամածի վրա արդեն զննգում եյին խարիսխի շղթաները և կրիլովը հայհույում եր, վոր լես ուշանում եմ—Փիրումովը քրոջ հետ (հետագայում պարզվեց, վոր սա նրա կին «Մուխա»-ն է) հաստատեցին իմ կասկածները: Մենք ամուր սեղմեցինք միմյանց ձեռքը:

— Յես Փիրումով չեմ, լես Սերգեյ Բաբախանն եմ, —ասաց նա հուզված. —անցիր Նաստիայի մոտ և պատմիր մեր խոսակցության մասին: Նա մեր մարդն է և քեզ տղաների հետ կկապի: Քեզ հաժար ֆրոնտն անցնելը կը հեշտանա:

Մենք արագ հրաժեշտ տվինք, շարժման ժամանակ թռա նավակի մեջ, վորտեղ արդեն նստած եր Իրակլին և լողացինք դեպի ափ՝ յերկար ժամանակ աչքերով հետևելով «Յեփստրատին»: Հասկանալի լես, վոր Իրակլին վոչինչ չասի Բաբախանի հետ ունեցած խոսակցության մասին:

ՀԱՎԱՀԵՏԱԽՈՒՋՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԸՆԴՀԱՏԱԿԻ ՄԻՋԵՎ

Հետևյալ որը լես ուղևորվեցի Փիրումովի կնոջ ընկերուհու՝ Նաստիայի մոտ, և յերկար նրա հետ զրուցում երի զանազան թեմաներից, փորձելով նրան անցկացնել քաղաքական խոսակցության: Ձգում եյի, ինչպես նա զգուշավոր զիրք բռնեց: Բայց զցած կարթերը «չերկացում», ազատվում եր հանաքներով և, առհասարակ, «որիորդախաղ» եր անում: Այն ժամանակ լես նրան ուղղակի պատմեցի յերեկվա հանդիպման մասին: Նա շքեց: Նրա մեջ պարզ զգացվում եր յերկու սկզբնավորության պայքար, — ուրախության, վոր լես «մերն» եմ, և պրովակացիալ յերկուդի: Վերջապես վերջին տարակուսները ցրվե-



Խումբը, վորի մեջ ընկա, ինձ շատ սիրալիկ ընդունեց:

ցին և մենք համաձայնեցինք, վոր հենց այդ ուրը նա կը-
ծանոթացնի ինձ ընկերներին հետ:

Յերեկոյան յես մտա նրա մոտ, և ուղեւորվեցինք:
Քաղաքի ծայրամասում նա ծեծեց մի հարկանի աը-
նակի պատուհանը: Դուռը բացեց մի բարձրահասակ, մոտ
բաժն ութ տարեկան սևահեր կին, վոր ձեռքին բռնած
ուռներ վառած նավթի լամպը: Նաստիան ժպտալով ասաց.
«Սոնիա, սա «մեր տղաներից» է, և անցանք սենյակ: Այս-
տեղ մի քանի մարդ կար՝ հիվանդոտ դեմքով ուսանող Ա-
լեքսանդրը, սրա կին Սոնիան համար յերկուսը, գանգ-
րահեր պատանի Ալլոշա Յվելը՝ առաջին Սոնիայի յեղ-
բայրը և յերեք տարեկան հրաշալի մանուկ Անդրյուշկան,
վորը մեծ հետաքրքրութեամբ սկսեց ինձ նայել: Խուժըր,
վորի մեջ ընկա, ինձ շատ սիրալիր ընդունեց, և յես վա-
ճառականի և բալլշեփիզմի կատաղի թշնամու դերը խա-
ղալուց հետո, առաջին անգամ՝ շատ խճճված դրութիւն-
ներից անցնելով, զգացի ինձ հարազատ միջավայրում: Յես
սկսեցի ալտեղ գալ համարյա ամեն յերեկո: Իրակլին, ի-
հարկե վոչինչ չգիտեր իմ ընդհատակյա գործունեութեան հետ
ուռնեցած կապերի մասին: Իմ հաճախակի բացակայութիւն-
ները յես բացատրում եյի Նաստիայի հետ լինելով: Անուա-
մենաչնիվ ինձ թվում եր, վոր նա սկսել եր կռահել և ա-
վելի ու ավելի համառութեամբ խորհուրդ եր տալիս ինձ
Կովկաս վերադառնալ: Ինքը Իրակլին ետոր-եգուց պատ-
րաստվում եր գնալու:

Ընդհատակյա գործիչների խմբակն այս շրջանում գեուես վոր
և ե աշխատանք չեր կարողացել սկսել: Ինչպես միշտ՝ ջախ-
ջախումից հետո, ամբողջ Ղրիմում մնացել եյին բալլշե-
փիկների մանրիկ խմբակներ, վորոնք նոր-նոր սկսել եյին
փոխադարձ կապեր հաստատել: Սա մի շրջան եր. յերբ
լավանում եյին տաք կովում ստացած վերքերը: Սեաս-
տոպոլում ավելի ուժեղ խումբ կար ընկ. Սայկելիչի («Մալ-



Ղրիմում մնացել եյին բալլշեփիկների մանրիկ խմբակներ,
վորոնք նոր-նոր սկսել եյին փոխադարձ կապեր հաստատել:

չիշկա») գլխավորութիւնը, վորն այդ որերին կարողացել եր նախահանգստային բանվորներին հետ քիչ-միշ կապեր հաստատել: Մեր Յեվպատորչոն խումբը կապված եր խալկիկի հետ: Հիշում եմ մի անգամ նրանից հեռագիր ստացվեց՝ «Ուղարկեցեք քսան գրոսս սատափ»: Այս կընշանակեր, վոր նրան հարկավոր եր յերկու հազար ուրլի, այսինքն՝ քսան հատ գունավոր հարցուրանոց թղթադրամ:

Յեվպատորչիական խումբը վախենում եր Սեվաստոպոլի հետ յերկաթուղային կապ պահպանել:

Այս նպատակի համար գնված եր կառք և մի զույգ ձի, վորոնք հանձնված ելին ընդհատակյա շարքային գործիչներին մեկին, կամ, մի ընկերոջ, համենայն դեպս, վորը ճանաչվում եր վորպես համակրող: Նա այս կառքով փող պիտի տաներ խալկիկին: Բայց կառքի բանը վերջացավ նրանով, վոր կառապանը շարժատան գուրս յեկավ: Նա, ոգտվելով գաղտնի գործունեություն պայմաններով, յուրացրեց ձիերն ու կառքը: Լավ ե, վոր ամբողջ խմբին չմատնեց:

Իմ գրութիւնն անձնապես շատ փափուկ եր: Մի կողմից յես վաճառական ելի, հակահետախույզների քեֆընկեր և ոգտվում ելի նրանց անպայման վստահութիւնը: Մյուս կողմից ընդհատակյա գործիչ ելի, կապված կազմակերպության հետ: Իրակլին վոչ սպիտակ եր, վոչ կարմիր, ինձ շատ լավ գիտեր և յեթե մի քիչ վատ մարդ լիներ, ամեն ըողել, կամ թե աւամա կարող եր ինձ կործանել: Գիտեր ինձ նաև «Յեվպատորչի» ծառայողներին խումբը, վոր հարբած կամ հիմարութիւնը՝ կարող եր նույնը անել:

Հակահետախույզների հավատը դեպի ինձ ախճան մեծ եր, վոր մի անգամ ինձ մոտ վազեց ծանոթ տեղակալներից մեկը, իր հետեից դուռը փակեց և ասաց:

— Մի մեծ խնդիր ունեմ: Գելենիկից բալլշեվիկների համար զենքերով բեռնած առագաստանով պիտի գա. զենքը՝ դարսած կլինի հատակին, իսկ վերեւից ծածկված վորեւե ապրանքով: Այդ զենքը բերում են յերկու հայ: Մենք հսկողութիւն ենք սահմանել: Հենց վոր պարզվի, վոր նավը յեկել ե, դու նրանց հետ ծանոթացիր, գըրավիր նրանց վստահութիւնը, խոստացիր ոգնել նրանց քո պահետով՝ զենքը դարսելու համար և այլն: Գալիս ե: Ինձ ու բեց մեծ և հաստատ պարգև կլինի:

Յես թագցրի իմ հուզմունքը և համաձայնեցի: Սրանից հետո՝ շաբաթվա ընթացքում, յերկու անգամ ինձ մոտ վազեց հակահետախույզը, հաղորդելով ինձ կապածելի առագաստավորների գալստ մասին: Յես գնում ելի նավահանգիստ և հսկում ելի ափ իշնողներին: Սրանցից մեկի հետ ինձ հաջողվեց ծանոթանալ, սրճարանում նրա սեղանի մոտ նստելով: Յերկու որ մենք ծանոթութիւն ելինք վարում, բայց անաջող: Վերջը պարզվեց, վոր նա միայն նման ե հայի: Սա հուշն եր, վոր Կ. Պոլսից մաքսանենգային գաղտնիքներ յեր բերել: Նա ինձ առաջարկեց գընել մեծ քանակութիւնը կանացի չուլիներ, դուխի, պուդրի և յերկու վեզրո յող: Յես պատասխանեցի, վոր ինձ ավելի վալյուտան ե հետաքրքրում և սրանով բաժանվեցինք: Այնպես ել չհաջողվեց բռնել բալլշեվիկյան զենքերի տրանսպորտը, ինչի մասին յես ու հակահետախույզը խիստ ցավում ելինք: Բայց մեր հիմքերը այդ բանում տարբեր ելին. նա կորցրեց դրամական ընծան, իսկ յես ցավում ելի նրա համար, վոր ինձ չհանդիպելով, այդ տրանսպորտը իսկապես պիտի անհայտանար: Հետագայում յես իմացա, վոր Հյուսիսային Կովկասից, Ղրիմի «Կանաչների» համար իսկապես զենք եր գալիս, բայց դա Յեվպատորչի չեր գնում, այլ Ղրիմի հարավային ափը:

ՅԵՍ ՅԵՍ ԶԵՄ, ԱՅԼ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆՑՆ ԵՄ

Իրաւիւն գնաց, և մեր եքսպեդիցիայից Յեվապատրիալում միայն յես մնացի։ Լրագրերը լի ելին «կամաւորական բանակի» փալլուն հաղթութիւնների տեղեկութիւններով։ Սարկովի արդեն գրաված եր. Սպիտակները պատրաստվում ելին նուէն տեմպով շարժել դեպի «առաջնագահը» և քննում ելին «Ռուսական կայսրութիւն» գահի թեկնածութիւնները։ Յես պիտի մտածելի մեկնելու մասին։ Սկզբում յես նկատի ելի առել հետևյալ ծրագիրը՝ գնալ մինչև Պերեկոպ, աշտեղից նավակով ծկվել Սկադովսկ նավահանգիստը, վոր դեռ խորհրդային եր մնացել։ Բայց, լերբ պարզվեց, վոր սպիտակ բանակի հաջորդ առաջխաղացումը այդ վարիանտը դարձնում ե անիրագործելի, իմ մեջ հասունացավ նոր ծրագիր — անցնել լերկաթուղով մինչև Ալեքսանդրովսկ, նրա և Կրիվոյ Ռոգի միջև վորեւ տեղում լողանալով անցնել Դնեպրը և ալպիսով ընկնել կարմիրների մոտ։ Բայց այս վարիանտն ել որեցոր պակաս իրագործելի լեր դառնում, վորովհետև Ուկրաինայի շրջանում և նրանից հյուսիս կովոդ Կարմիր բանակի ամբողջ խումբը Մոսկվայից կտրվելու վտանգի տակ եր։ Այն ժամանակ յես վորոշեցի անցնել Սարկով և ելի դեպի հյուսիս, հուսալով մնալ վորեւ ճակատամերձ շերտում, մինչև վոր կարմիրները, անցնելով թեկուզ մասնակի առաջխաղացման, ձեռք կգցեն այն կետը, վորտեղ յես սպասելիս կլինեմ։ Մոսկվա անցնելը շատ դժվար եր։ Յեվ հեշտ խնդիր չեր Յեվպատրիալում նստած հնարել այս կամ այն ծրագիրը, լերբ քաղաքական և ոպերատիվ սրէնթաց պարագաները կինեմատոգրաֆիական արագութիւնը ելին փոխվում։ Հարկավոր եր գնալ, իսկ այնուհետև ինքը կխնդր ցուլց կտա՝ ինչ և ինչպես անել։ Ինձ համար մի բան պարզ եր՝ յես հետ չեմ գնալ։

Քեֆընկեր սպաների հետ յես կապս չելի կորցնում, հաշվելով, վոր նրանք դեռ կարող են ինձ ոգտակար լինել։ Իրակու մեկնելուց հետո՝ մենք դեռ մի լերկու-լերեք քեֆ ունեցանք, վորին ուղեկցում ելին անեծքներ բալլչիկների հասցելին, կենացներ գնեռալներ Դենիկինի, Սլաշչի, Մալ Մալեվսկու, Շիլինգի և այլնի համար։ Խմած սպաները, մանավանդ լերկրորդ կորպուսի հակահետախուզութիւնի պիտի մի լերիտասարդ ոգնականը, ախորժանքով պատմում ելին, ինչպես իրանք սեփական ձեռքերով կախում և գնդակահարում ելին բալլչիկներին։ Այս նուէն ոպան գրպանում պահում եր այն թուկի կտորը, վորով նա Սիմֆերոպոլում կախել եր «բալլչիկյան կոմիսարին»։ Ընթրիքները միշտ ուղեկցվում ելին վայրագութիւնով։

Մի անգամ ռեստորանում մեր քեֆընկեր Կորնիլովյան գնդի սպան, վոր խիստ հարբած եր, նվագախմբին հրամայեց նվագել „Боже, царя храни“ (աստված, պահաւիր թագավորին)։ Մոտավորապես դիշերվա ժամի լերկուսն եր։ Դանիճում բոլոր գտնվողները կորցրել ելին դատելու ընդունակութիւնը։ Շատերս արդեն պառկոտած ելին սեղանների տակ։ Ներկաներից մի քանիսը հիմնը կատարելու ժամանակ՝ չկանգնեցին։ Պետք ե ասել, վոր նվագի կատարումն ել հարբած եր՝ նվագածուներին հարբեցրել ելին և նրանց կնտկնտոցները (ОМЫЧОК) վատ ելին գործում։ Հանկարծ լավեց ուժեղ դղրդուէն և ջարդվող աւոյեգնութիւն մեջ՝ լերկու դատարկ շիշ ե շարտել դեպի հարեան սեղանը, վորտեղ նստած եր անծանոթ քաղաքացիների մի խումբ։ Աղաղակ բարձրացավ։ Բոլորը վեր թռան տեղերից։ Հարբած սպան բղավում եր։

— Զեմ թույլ տա, վոր վոչ-գինվորական գարշելիները հարգանք ցուլց չտան դեպի նորին կայսերական մեծութիւնը։ Յ. ր. ր. վեցեք, լրբեր...



Ապաները հարբած խումբը զրազ բռնեց, թե ով կարող է
թրերի հարվածների քիչ թվով կտրել հաստ արմավենիները:

Մենք փորձեցինք նրան դապել, բայց իզուր: Դահլիճում գտնվեց համեմատաբար քիչ խմած մի գնդապետ, վորը մոտեցավ մեր սեղանին և սպալին առաջարկեց անմիջապես հեռանալ, վորն և նա կատարեց մեծ դժգոհությամբ: Այսպիսի տեսարաններ ամեն ոք կտրելի չէր դետել բեստորաններում:

Մի ուրիշ անգամ յես վկա ելի այն բանին, թե ինչպես սպաների հարբած խումբը զրազ բռնեց, թե ով կարող է թրերի հարվածների քիչ թվով կտրել հաստ արմավենիները:

Չնայած տիրոջ և մետր դ' ոտելի խնդրին և բողոքներին՝ յերկու սպա վայրենի հրճվանքով սկսեցին կտրտել թանգազին ծառերը: Յերբ չորս արմավենի այլանդակված ելին, սպաները սպասավորին մի քանի ոտարեկրյա թըղթադրամներ շարտեցին և շարունակեցին քեֆը: Ելի խմելով, սպաները սկսեցին շահերի վրա առաճանակ արձակել և լամպերը հանգցնել գնդակներով: Քանի վոր ամբողջ դահլիճը հարբած էր, ուստի վոչ վոք ուշադրություն չէր դարձնում ափսեհների մեջ և գլուխների վրա թափվող կտորափայտներին: Ամեն մի հաջող նշանառմանը ծափահարում ելին: Այս տեսարանները դիտելով յես հոգով ուրախանում ելի. այսպիսի հրամանատար կազմ ունեցող բանակը չէր կարող հաղթել:

Մի այսպիսի ընթերիքից հետո, բեստորանի այգու դռների մոտ բոլոր գուրս յեկողները դեմ դիպան վոստիկանության: Պարզվեց, վոր դասալիքների շուրջկալ է կառարվում. փաստաթղթերի ստուգումից հետո շատերին ազատ թողին, իսկ ափելի կասկածելիների մի մասին քաղաքապահների հսկողության տակ, մի կողմ տարան: Դրժբախտաբար, իմ անցագիրը՝ գրանցելու համար՝ թողել ելի հյուրանոցում, և ինձ մոտ վոչ մի փաստաթուղթ չունեի: Բողոքելը ավելորդ էր: Յերկու տասնյակ բռնվածների հետ ինձ տարան վոստիկանատուն: Հուլիս ունեյի, վոր

հերթապահ թաղափն փոստիկանը, հյուրանոցի շվեյցարի միջոցով հեռախոսով հեշտ կարող է ստուգել իմ հայտարարութեան ճշտութիւնը: Արդեն գիշերվա ժամի լերեքն եր: Հերթապահ փոստիկանական առտիճանավորը (Ռուսաստանի հարավում փոստիկանութիւնը կոչվում էր «Պետական պահպանութիւն»): հայտնեց, վոր նա վոչ մի տեղ չի գտնուողի, և, հորանջելով, հրաման տվեց տանել ինձ «մութ տեղը»: Դե, եզուց կպարզվի, ելի: Պետք է խոստովանեմ, վոր գլուխս խշշում էր: Այսպիսի դրութեան ժամանակ մարդիկ ինքնաքննադատութեան ընդունակութիւնը կորցնում են: Յես վորոշեցի լռել՝ վախենալով, վոր յեթե տաքանամ, կարող եմ ավելորդութիւններ դուրս տալ:

Ստիպված ելի աթոռին նստած գիշերել՝ կեղտոտ, թքոտած և ծխախոտի մնացորդներով ծածկված ներքնատան սենյակում: Այստեղ ել նստած ելին մի քանի տասնյակ իսկական թափառաշրջիկներ (шпаны): Նրանք խոսում ելին գաղտնի լեզվով, և յես վոչինչ չեյի կարողանում հասկանալ: Լսվում ելին բառեր՝ «Փրայեր», «ցու գունտեր», «շկետ», «փարավոն» և այլն: Յերկու անգամ նրանք իրար մեջ կռիվ սարկեցին, քաժ յեկող հերթապահ թաղային սկիչը կռիվը դադարեցնում էր միքանի ռեխ շարդելով: Յես քնել չկարողացա:

Վերջապես սկսեց լուսանալ: Ժամանակը տաղտկալի դանդաղ էր գնում: Առավոտյան ժամի տասին մոտ՝ սկսեցին մեզ մեկ-մեկ դուրս տանել հարցափորձի: Մեծ գրասենյանի մոտ փառահեղ բազմած էր սե, բրդոտ բեխերով պրիստավը, խայտաճամուկ տարազով: Մեր խոսակցութեան հենց առաջին բառերից ալ մոռլ դեմքը սկսեց պարզվել: Բանից դուրս յեկավ, վոր մինչև 1917 թիվը նա թաղային հսկիչի պաշտոնով ծառայել է Բագվի փոստիկանատանը:

— Են Բարխուդարյանցը, վոր գինու առուտուր ուներ, ձեր ազգականն է, ինչ է:

Յես գիտեյի, վոր Բագվում իրոք այդպիսի ֆիրմա կար, բայց վախենում ելի, վոր պրիստավը անձամբ կարող է լավ ճանաչել ալդ ընտանիքին, վորին յես, իհարկե, յերբեք չեմ ճանաչել: Առանց յերկար ու բարակ մտածելու՝ պատասխանեցի, վոր նա իմ հորեղբայրն է:

— Ե՛ր, լավ մաղրասա*) ուներ: Քրիստոսի ծննդին և սուրբ զատիկին մեկ-մեկ վեղոր ուղարկում էր: Դուրեկան քաքաք է Բագուն...

Կես ժամի չափ գրուց արինք: Հարցրեց, թե յերբ եմ վերադառնալու և խոստացավ վաղը մտնել հյուրանոց, նամակներ բերել իր բարեկամների անունով: Սրանով ել նրաժեշտ տվինք իրար: Մի որից հետո նա իսկապես յեկավ, և մենք թեյ խմելիս՝ նրա հետ յերկար խոսեցինք Բագվի հրաշալիքների մասին: Նա ինձ հանձնեց յերեք նամակ փոստիկանական պրիստավների անուններով, և խընդրեց, վոր խոսքով նրանց բարեւեմ: Հենց նույն յերեկոյան բաց արի այդ նամակները՝ հուսալով, վոր ինձ համար ոգտակար վորեւե բան կիմանամ: Պրիստավը հաղորդում ոգտակար վորեւե բան կիմանամ: Ռոճիկն, ասենք, շատ չե, մի էր, վոր ինքը վառ չի աղրում: Ռոճիկն, ասենք, շատ չե, մի էր, վոր ինքը վառ չի աղրում: և մաքսանենգներին՝ 120 ռուբլի, բայց, վառք աստծուն և մաքսանենգներին՝ յեկամուտները ամսական: հասնում են մինչև 500 ռուբլու: Նա անկեղծորեն գրում էր կողմնակի յեկամուտների մասին, ըստ յերեուկին միանգամայն հույս դնելով ինձ վրա: Նույնպես հաղորդում էր, վոր «Նորին գերազանցութիւն Բագվի քաղաքապետ կավալլովը ալժմ Ստավրոպոլի նահանգապետ է և չափազանց հովանավորում է Բագվի ծառայակիցներին: Յեվ ուրեմն, յեթե դուք համարիական*)

*) Գինու մի տեսակը, Շամախու շրջանի մտղրասայից:

*) Արտահայտութիւն, վոր բնորոշում է վերիկողերժալ արհամարհանքը դեպի փոքր ազգերը:


կառավարութեան մեջ վատ եք ապրում, այն ժամանակ անցեք նորին գերազանցութեան մոտ: Նա հաճութեամբ պաշտոն կտա: Յե՛վ ամեն ինչ այս փոփոխ: Նամակները կարգալուց հետո՝ ալրեցինք: Յե՛վ պատորիայից մեկնելուց քիչ առաջ, պրիստովը փողոցում պատահեց և 20 ուլբլե «պարտք» խնդրեց և, ինչ ասել կուզի, փողի լերեան այլ-ևս չտեսա:

ՍՊԻՏԱԿ ԲԱՆԱԿԻ ՄԻՋՈՎ ԴԵՊԻ ԿԱՐՄԻՐ ՄՈՍԿՎԱ

Խարկով անցնելու համար պահանջվում եր զինվորական հրամանատարութեան հատուկ թույլտվութիւնը: Դա իմ «ընկերները» ճարեցին ինձ համար: Բացի սրանից, տեղական հակահետախուզութեան պետը նազան կրելու իրավունքի թույլտվութիւն ձեռք բերեց և հենց ինքը 20 ուլբլով ինձ ընծայեց մի լավ ատրճառակ: Դեպի հյուսիս կանոնավոր շարժում չկար դեռևս: Գնացքները կազմվում ելին տեպուլշկաներից, վորոնց մեջ 40—50 մարդ եր տեղավորվում: Բառացի՝ միմյանց վրա ելին նստում:

Այն գնացքին, վորով գնում ելի, կցեցին լերեք զինվորական վագոն: Սրանցով գնում եր պլաստունյան մի հարյուրյակ: Կուբանցի սապորները հագած ունին գորշ չերքեսկաներ: Ամբողջ ճանապարհին նրանք եմում ելին: Մի քանի կայարաններում նրանք դուրս ելին թռչում վագոններից, շրջան կազմում և գարմոշի նվագի տակ վայրենի պար սկսում: Բազմութիւն եր հավաքվում: Կայարանապետը ապարդիւն վազվզում եր կառամատուցով, խնդրում նրանց նստել: Սպանները սպառնում ելին սրբերով, բղավում ելին:

— Շո՛ւն, չհամարձակվես գնացքն ուղարկել, քանի վոր կուբանցիները պարում են: Յերբ հոգնենք, ինքներս կասենք:



Պարի պատճառով գնացքը՝ մի քանի կայարաններում կանգնում եր լերկա-լերեք ժամով:

Պարի պատճառով գնացքը մի քանի կայարաններում կանգնում եր յերկու-չերեք ժամով: Մեխիտոպոլից դեպի հյուսիս հանկարծ հրացանների ճարձատյուն բարձրացավ: Գնացքը կանգնեց: Պարզվեց, վոր մենք անցնում ենք լավ մարգագետնի մոտով: Սպաները ցանկացել են պարել: Նրանք յերկար ժամանակ թաշկինակով են արել, շվացրել են մեքենավարին, բայց նա նրանց ազդանշանները չի նկատել: Այն ժամանակ նրանք վորոշում են հրացանաձգությամբ գրավել ուշադրությունը և հարկադրել գնացքը կանգնեցնելու:

Նրանք այդ բանին հասան: Պարն սկսվեց: Հարբած, կարմրած ռեխներով, հազիվ կանգնելով վոտքերի վրա, նրանք գծից 30 քայլի վրա վայրի լեզգիկա ելին պարում, իրենց տեսքով սարսափի մեջ գցելով ճանապարհորդներին: Սպաները մի ժամից հետո այնքան հոգնել էին, վոր կողակները սկսեցին նրանց թին անցած՝ վազոն տանել, և մեքենավարին թույլ տրվեց գնացքը շարժելու: Չնայած այսպիսի հարեվանության բոլոր անգուրեկանութուններին՝ դա մեզ ազտավետ չեղավ: Սպաները չլինեյին, մենք կայարաններում ժամերով պիտի կանգնեինք, սպասելով շոգեմեքենայի, վորովհետև ճանապարհորդական գնացքներին վերջին հերթին ելին շոգեմեքենա տրվում: Իսկ մեր սպաները ներս ելին պրծնում կայարանապետերի առանձնասենյակը և սպանալիքներով հարկադրում էին իսկույն շոգեմեքենա տալ: Այս պատճառով մենք կրկնակի արագությամբ ելինք շարժվում: Սինելնիկով և Լոգովայա կայարաններում մեր վագոնը լցվեցին դեմից յեկող եշելոնի սպաները և կայարանի ժանդարմները և պահանջեցին հանձնել «Չնուդներին»: Նախորդ օրը Սինելնիկովյում գնացքից դուրս ելին քաշել և տեղն ու տեղը գնդակահարել հինգ հրետի:

Կառամատուցի վրա սեին եր տալիս նրանց չորացած արյունը:

Վերջապես գնացքը խարկով հասավ: Յես վորոշեցի գիշերել կայարանում: Առավոտյանից պիտի հոգ տանելի դեպի Բելգորոդ տոմսակ ճարելու: Հասարակ մահկանացուներին այնտեղ գնալը արգելված եր: Տոմսերը ծախում էին միմիայն հատուկ թույլտվություն ներկայացնելիս, վոր տալիս եր գինվորական հրամանատարութունը: Վորեք մեկի աջակցության վրա հույս դնել չէի կարող: Ինձ դուրս պրծացրին կարմիր գլխարկներով սուրհանդակները (посыльные), վորոնք խոնված էլին յերկաթուղային կայարանի մոտ: Դրանցից մեկը տասն ուրբի վարձատրությամբ ինձ մի տոմս ճարեց յերկու օրից հետո մեկնող գնացքի համար: Ծակատի մոտիկությունն զգացվում եր: Խանութներից շատերը դեռ չէին ծավալել առուտուրը: Յուցափեղկերում կախված էլին մեծ քանակությամբ նկարներ՝ Դենիկինի, Մայ-Մայեվսկու, Վրանդելի, Պակրովսկու, Կորնիլովի և այլն: Այնտեղ կախված էլին անդրագետ Ֆելդֆեբելյան վոտանավորներ, վորոնք ծաղրում էին բալլետիկներին և «Չնուդներին»: Ոսվարի*) արտադրանքը՝ կոպիտ և վոչ սրամիտ՝ առատությամբ փակցրած եր փողոցներում: Խմբերով ման ելին գալիս գերի կարմիր բանակայինները, վորոնք կորցրել էին մարգկային կերպարանքը: Նիհար, քաղցած, ցնցոտիներով, նրանք վողորմություն ելին խնդրում և դրանով ապրում: Սպիտակները նրանց գերելուց հետո հանում էին նրանց հագուստը, կոշիկները և բաց թողնում: Նախկին կարմիր բանակայինների մեջ մահացությունը — ցրտից և տիֆից — հսկայական եր: Յելու օր ու դիշեր խարկովի պարտեզներում և կայարաններում թափառելուց հետո՝ յես առաջ շարժվեցի:

*) Տեղեկատու դրծակալություն, մի օրգան, վոր սաշտոնապես դիկավարում եր մամուլը և հասարակական ինֆորմացիան, իսկ փաստորեն հակահետախուզության ոժանդակող օրգանն եր:

Ուշ գիշերին գնացքը հասավ Բելգորոդ: Հետագա գործունեությունների մի վորոշ ծրագիրը չդնելի: Կայարանի դահլիճում շատ ժողովուրդ էր հավաքված: Այստեղ կային վիրավոր սպաներ և կորնիլովյան զինվորներ, գլխավոր ջուրեր, այստեղ կանգնած զրահապատ գնացքի սպաներ և այլն: Յես վախենում էր վորեւ մեկի հետ խոսքի բռնվել և աշխատում էր ինձ հեռու պահել: Հատուկ կտոր արտահայտություններից յես գլխի՝ ընկա, վոր սպիտակ բանակը, իր ճամբին առանձին դիմադրություն չհանդիպելով՝ արշավում է: Բացի զինվորական ծառայողներից, վոչ վորքի չէր թույլատրվում դեպի ճակատ մեկնել:

Սպասեցի մինչև առավոտ, գնացի մոտակա խանութը և սպալի ուսադիրներ գնեցի, վոր և տեղն ու տեղը կարեցի բաճկոնիս: Հետո ծանրոց չունեցի: Ուսիցս կախված էր տերմոսը և գոտեփոկից — նագանը: Այս բոլորը խնձ տալիս էին համեմատաբար որինավոր սպայական տեսք, և արտաքուստ կասկած չէր դարձեցնում: Միակ արգելքը կարող էր լինել իմ շատ մատաղ տեսքը: Բայց Ղրիմից հետո յես հեռատեսությամբ չէր ածիլվել, մազոտվել էր և ինձ կարելի էր 20—21 տարեկանի տեղ գնել: Կայարանի հերթապահից իմացա, վոր ժամի չորսին ճակատի ուղղությամբ մեկնելու յե մի գնացք ճամբարա-կային բեռով: Նշանակման կետը — Ռժավա կայարանը: Այնուհետև ճանապարհը փչացրել են նահանջող կարմիր-ները: Ընթացքի ժամանակ յես թռա վազոններից մեկի արգելակի հարթակի վրա:

Կայարանների մոտ թռչում-ցած էր իջնում, խուսափում էր նրանցից, երբ ընթացքի ժամանակ նստում էր գնացքը և այսպիսով խուսափում էր հնարավոր հանդիպումներից և խոսակցություններից: Այս միանգամայն անհրաժեշտ էր, վորովհետև բավական էր, վոր դեմ ընկնելի ամենաանմեղ հարցի, որինակ՝ վոր գնդումն եմ ծա-

ռայում, վորտեղ և կանգնած գունդը և այլն — և յես կը կորչեյի:

Արդեն մթնում էր, յեր գնացքը մոտեցավ Ռժավա կայարանին: Այստեղ զգացվում էր ճակատի անմիջական մոտիկությունը: յերեացին գումակներ, սանիտարական յերկանիվ սալակներ: Վոչ հեռու կանգնած էր կոզակների շոկատը: Տամալով (платформа) վազվում էին զինվորականներ: Նրանցից շատերը կորնիլովյան տարազ ունեյին — գանգ և խաչաձև դրած վոսկրեր թևի վրա: Յես անհրաժեշտ համարեցի մթնությունից ոգտվելով հեռանալ կայարանից դեպի դաշտ: Ստիպված էր գիշերել խանդակում, թփի տակ:

ՍԱՐԴԸ ԽՈՒՐՁԻ ՏԱԿ

Վաղ առավոտյան արևի ճառագայթներն ինձ զարթնեցրին: Յես ուղևորվեցի դեպի գյուղը, վոր գտնվում էր մի քանի կիլոմետրի վրա: Լսվում էր հրետանու հեռավոր դրդույունը: Ճակատը մոտ էր: Դաշտում տեղ-տեղ յերեվում էին աշխատող գյուղացիներ: Իմ գիշերելու տեղից դեռևս յերկու կիլոմետր էլ չէր հեռացել, վոր վոչ հեռու հանկարծ բարձրացավ փոշուխիտսյուն: Լսվեց պայթյուն: Նա ինձ ավելի աշխուժացրեց: Եթե հրետանական արկերը այստեղ են ընկնում, պարզ է, վոր կարմիր հրետանին 7-8 կիլոմետրից հեռու չէ: Առաջին արկից հետո՝ վոչ հեռու, բայց և ահալես մոտենալով ճանապարհի լիբին (КОЛОТНО) երբ ընկան յերկու արկ: Պարզ էր, վոր մարտկոցը հարվածներն ուղղում է Ռժավա կայարանին:

Գյուղացիք, վորոնց մոտ ընկնում էին արկերը, չէին շփոթվում և շարունակում էին աշխատել: Գիշերելու տեղից վոչ հեռու վոտքս ինչ վոր բանի ընկավ: Պարզվեց, վոր կանաչի վրայից հեռախոսի լար է քաշած:

Շուրջս նայեցի և, համոզվելով, վոր վոչ վոք չկա, յես
նրան արագութեամբ կտրեցի դանակով, թող թեկուզ կարճ
ժամանակով՝ խանգարվի սպիտակ զորամասերի հրամանա-
տարութեան կապը:

Յեռ քաղցած ելի։ Գնացի գլուղ հաց վորոնելու։ Գլուղացիք ամեն տեղ մերժում ելին։ Հնարավոր ե, վոր նըրանք կասկածում ելին, թե յես խարապան եմ, վորն ուզում ե հետախուզել՝ չկա՞ արդյոք բռնագրավելու մթերք։ Յերկար վորոնումներից հետո՝ մի պառավ վողորմաց. նա ինձ ծախեց մի կտոր հաց և մի գավաթ կաթ։ Պառավը յերկար տատանվում եր թղթադրամների ընտրության մեջ։ Նրան առաջարկում ելի «գոնճան» և «կարբոփանցի» փողեր։ Նա այս փողերը առաջին անգամն եր տեսնում-ընդամենը չերկու որ ե, ինչ կարմիրները նահանջել են։ Գլուղում մնալը ցանկալի չեր։ Յեռ առաջ գնացի ճանապարհը գիտելու և անհանգստությամբ մտածում եյի վոր-ևե հետախույզ խմաի պատահելու հնարավորության մասին։ Ինձ հասավ ուսլի վրա նստած գեղջկուհին։ Իմ հարցեն՝ թե ո՞ւր ե գնում, նա կանգնեցրեց ձին և ձեռքով ցույց տալով աջակողմյան գլուղն՝ ասաց։

— Դեպի Կալբասովկա:

— Բայց, ախր, աշնտեղ բալլշէիկներ են:

— Կարժատովկայում բայձի իկներ են, իսկ Դվոյե-
ռւչնոյում վոշ (յերկու գլուղերը համարյա միացած են):

Նա պատմեց, վոր իր համագլուղացիների դաշտերը
գտնվում են այն կողմը, վոր այժմ գրավել են սպիտակ-
ները, իսկ գլուղու շենքիների դաշտերն ընդհակառակը՝
գտնվում են կարմիրների ձեռքին։ Յեվ կարմիրները, և
սպիտակները չեն արդելում գլուղացոց իրենց հացը հա-
վաքելու։ Այսպիսով գլուղերը հաղորդակցության մեջ են,
իմ մեջ արագությամբ ծրագիր հասունացավ։

— Յես կնստեմասալիւն և կծածկիմ խուրճերի մեջ:

Կերթամ հետախուզության Կալբասովկա, Վադն և եթ դու
ինձ յետ կրեքես:

— Նա տատանվում եր.

— Բա վոր բալլէիկները քեզ սպանեն, ել լեա որ
չեմ տեսնի, կասեն՝ մատնեց։

Յես նրա հետ յերկար չխոսեցի, բարձրացա սայլին և
չորս կողմից ծածկվեցի խուրճերով, Ուրեմն, լեթե ինձ
հայտաբերեն, կկախեն ոռաջին պատահած կեչուց։ Ծա-
նապարհին գեղջկուհուն հրահանգում եյի՝ յերկար չ'պա-
սել Դվոյելուհնոցում, կալբասովկա հասնելուն պես մտնել
աչգի կամ բակ, հավաստիանալ, վոր մոտակայքում վոշ վոր
չկա և ախ ժամանակ միայն ինձ իմաց տալ, վոր կարե-
լի լե դուրս գալ։ Յեթե ճանապարհին վորե ե հեծելա-
դետը հանդիպի՝ չասել, վոր խուրճերի մեջ սպա կա։
Մենք գնում եյինք մոտ ժամ ուկես։ Հանկարծ խուրճերի
հաստ շերտի միջից, լես լսեցի սմբականների դոփուլուն և
կողակների խոսակցութիւն։ Հեծելագետքը իսկապես
միառժամանակ գնում եր սայլի կողքից, բայց հետո մի
կողմի վրա հեռացավ։ Շուտով մենք կանգ առանք։ Լըս-
վեց դարպասի ճոնչիւն։ Հասկացա վոր տեղ ենք հասել
և շուտով լսեցի՝

ԴՈՒՐԱ ԿՐԻ, ՎՈՅ ՎՈՔ ՆԿԱՎ...

Դեռ ևս չհավատարմով, վոր յես վերջապես մերոնց
մոտ եմ, ՌՍՖՍՀ ում, շուրջս նաչելով, իջա սալից:

Սիրտս ավելի հաճախակի լեր լսվում, քան նրշու
հաղորդի լես:

— Վորտեղ ե շտաբը—հարցրի յես:


— Վորտեղ ե շտաբը — ասաց Սեդրակը։
— Հրեհ, տերտերի տանը, — պատասխանեց գեղջիկը։

— Զրե՛ն, տերտնիր! Ի՞նչ ես ասում:
— Ես ասում եմ, որ երբեք չեմ համարում վա-
ր՝ ինչ-որ բանի գույք տված կողմը:

Գեղի, ուղղվեցի դեպի ցուլի մեջ, որտեղ
Դեռ քսան բալլ ել չեի անցել, իբրեւ կտրուկ մի ձայն
լսեցի՝

— Կանգ առ:

Մի քանի կարմիր բանակալի՜ն հրացաններով ցցվե-



Յես ուսերիցս պոկեցի ուսադիրները և խնդրեցի տանել
ինձ կոմիտարի մօտ:

ցին առջևս: Դժվար է նկարագրել այն մոմենտի իմ ապ-
րումները, կարծես թևերով ելի թռչում իմ շտաբը, կար-
միր շտաբը: Յետև ելին մնացել աչքան դեգերումները,
վտանգները, քանի անգամ կյանքս մազից երլինում կախ-
ված և հանկարծ ալժմ, չերբ այս ամենը անցյալումն է,
իմ ճանապարհը փակում է խորհրդային սվինը: Յես պատ-
րաստ ելի գրկախառնվել այն կարմիր բանակայինին՝
վորը դաժանությամբ նայում եր ինձ: Այստեղ միայն գըլ-
խի ընկա, վոր կարմիր բանակայիններին շփոթում եր իմ
սպալական արտաքինը՝ ուսադիրները, ատրճանակը և
տերմոսը, վորը, ըստ լերևութին, ձեռնառումբի տեղ ելին
ընդունում: Յես ուսերիցս պոկեցի ուսադիրները և խըն-
դրեցի տանել ինձ կոմիտարի մօտ: «Ա՛յ թե հիմար վեր-
ջավորություն կստացվեր, յեթե այս պարագաներում կար-
միր բանակայինը հրացան պարպեր ինձ վրա» մտածեցի
յես: Կոմիտարը աղանջ դրեց ինձ և մտածելով, ասաց.

— Ձեզ, ընկեր, հաճույքով հավատում եմ: Բայց յես
հարկադրված եմ ուղարկելու ձեզ բրիգադի շտաբը:


Այնտեղ նույն պատկերը կրկնվեց: Ինձ «հաճույքով հա-
վատացին» և ուղեկցորդով ուղարկեցին դիվիզիայի շտաբը:
Միայն այստեղ իններորդ հրաձգային դիվիզիայի կոմիտարը
ազատեց ինձ, տվեց լիտեր, մթերք և նորոգման զնացող
զրահապատ զնացքով ուղարկեց Կուրսկ: Մի քանի որից
հետո Մոսկվայում ընկերներին մասնակից ելի անում
հիշողություններին իմ ճանապարհորդության, վոր սկըս-
վեց Փոթիում մայիսի 9-ին և վերջացավ Մոսկվայում սեպ-
տեմբերի 16-ին:

ՇԱՏ ԿԱՐՃԱՌՈՏ ՎԵՐՋԱԲԱՆ

Մի բանի տարի անց, չերբ Ղրիմից Մոսկվա անցնե-
լու համար արդեն ճակատն անցնել չեր պահանջվում,
յերբ ամբողջ «միացյալ և անբաժանը» կենտրոնացել եր

Կ. Պոլսի վորջերում, չերբ հաղթական պրոլետարիատի
կարմիր դրոշակը ծածանվում եր յերկրագնդի վեցերորդ
մասի ամենահեռավոր և խուլ անկյուններում, յես տեղե-
կացա, վոր իմ մեկնելուց շատ չանցած, Ղրիմի ընդհա-
տակյա կազմակերպութունները ջախջախվել եյին: Յեվ-
պատորիայի բոլոր ընկերները ընկել եյին հակահետախու-
թյան ձեռքը: Ալեքսանդրը և մի շարք ընկերներ գնդա-
կահարվել եյին: Այլոշան, Սոնիան և ուրիշները յերկար
նստել եյին բանտերում: Մեր փոքրիկ ընդհատակյա Ան-
դրյուշկան, փակված մոր հետ բանտում, չեր տարել ծա-
նրը ուժիմը, հիվանդացել և մեռել եր...

Այս բոլորը կատարվել են մարտի 1-ին հազար ինն
հարյուր տասն ինը թվին:



<< Ազգային գրադարան



NL0409001

11871

50р.
ч. 2

С. ШАУМЯН
БОЛЬШЕВИСТСКИЙ
КОНДРАБАНТИЗМ
ГИЗ. С.С.Р.А. ЭРИВАНЬ

891.991
7-26